EXPORT
INSURANCE AGENCY
OF ARMENIA

ՆԱԽԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

ՄԱՐՏ 2026

Եթե դուք արտահանող եք և օտարերկրյա գնորդի հետ ունեք արտահանման պայմանագիր, սակայն շրջանառու միջոցների անբավարարության կամ ֆինանսական ռեսուրսների անհասանելիության պատճառով անհնարին է դառնում ապրանքի արտադրությունը և/կամ օտարերկրյա գնորդին ապրանքի մատակարարումը, ապա կարող եք օգտվել «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի (այսուհետ՝ ՀԱԱԳ) կողմից առաջարկվող նախաարտահանման ֆինանսավորման ապահովագրության ծառայությունից (ՆՖԱ)՝ ՀՀ բանկերից և/կամ վարկային կազմակերպություններից ստանալով մինչև 2 տարի ժամկետով ֆինանսավորում:

ԻՆՉ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՍՏԵՂԾՈՒՄ ՆԱԽԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- Արտադրական անընդհատություն և արտահանման ծավալների ավելացում
- ՀԱԱԳ-ի կողմից տրամադրված ապահովագրության վկայագրի հիման վրա ֆինանսական կազմակերպություններից շրջանառու կապիտալի համալրմանն ուղղված անգրավ և մատչելի ֆինանսավորման ստացման հնարավորություն, որը կարող է օգտագործվել հետևյալ նպատակներով՝
  - Հումքի, նյութերի ձեռքբերում
  - Արտադրանքի փաթեթավորում և շուկայական տեսքի բերում
  - Տրանսպորտային և մաքսային ծախսերի կատարում

ԻՆՉ ՌԻՍԿ Է ԾԱԾԿՈՒՄ ՆԱԽԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախաարտահանման ֆինանսավորման ապահովագրությունը ծածկում է ՀՀ բանկերի և/կամ վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ-ից արտահանում իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվող արտահանման կարճաժամկետ վարկերի չվերադարձման ռիսկը:

ՈՐՊԻՆՔ ԵՆ ՆԱԽԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Վարկի առավելագույն ժամկետ՝ մինչև **2** տարի
- Ապահովագրական սակագին*՝ **0.9% - 2.7%**
- Չհատուցվող գումար՝ **10 %**
- Ապահովման միջոցներ՝ վարկառուի գործադիր մարմնի ղեկավարի և նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի/մասնակիցների երաշխավորություններ

ԻՆՉՊԵՍ Է ԳՈՐԾՈՒՄ ՆԱԽԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



* Ապահովագրության պայմանները որոշվում են հիմք ընդունելով արտահանողի և օտարերկրյա գնորդի ֆինանսական դրությունը, արտահանողի վարկային պատմությունը, համագործակցության պատմությունը, օտարերկրյա գնորդի երկրի ռիսկայնության դասը և այլն:

ՀԱԱԳ-Ի ԳՈՐԾԸՆԿԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

DICA

AEB ARMECONOMBANK ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

BYBLOS BANK

IDBank

AMERIABANK

AraratBank

INECOBANK

ԱՐՑԱԽԲԱՆԿ ARTSAKHBANK

UNIBANK

BANK AMIO

CONVERSE BANK

acba

FASTBANK

ARMSWISSBANK PRIVATE & INVESTMENT BANKING

VTB

evocaBANK

ՀԱԱԳ-Ի ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ

ՀԱԱԳ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ն հիմնադրվել է ՀՀ կառավարության որոշմամբ 2013 թվականին՝ ՀՀ ռեզիդենտ արտահանող կազմակերպությունների արտահանումը խթանելու և վերջիններիս համար մատչելի ֆինանսավորման ռեսուրսներ հասանելի դարձնելու նպատակով: ՀԱԱԳ-ի միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետությունն է:

2025 թվականին Moody’s հեղինակավոր վարկանիշային գործակալության կողմից «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ին շնորհվել է Ba3 stable վարկանիշ:

ՀԱԱԳ-ի կողմից ստանձնած ապահովագրական ռիսկերի մինչև 95%-ը վերաապահովագրված է հեղինակավոր Swiss Reinsurance Company Ltd. կազմակերպության կողմից, որն արժանացել է Standard & Poor's AA- (Very strong/ stable outlook), Moody's Aa3 (Excellent/ stable outlook) և A.M. Best A+ (superior/ stable outlook) վարկանիշների: 2023 թվականից սկսած ապահովագրական ռիսկերը վերաապահովագրվում են նաև ներքին շուկայում ՝ «Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից:

2026 թվականի մարտ ամսվա դրությամբ ՀԱԱԳ-ի կողմից վճարված ապահովագրական հատուցումների ընդհանուր գումարը կազմել է շուրջ 754 մլն ՀՀ դրամ:

Ապահովագրական պատահար չհամարվող դեպքերը կամ ռիսկերը, ապահովագրական հատուցում ստանալու կարգը և գործընթացը, ապահովադրի կողմից ապահովագրավճար չվճարելու հետևանքները, ապահովադրի իրավունքները և պարտավորությունները, ապահովագրության պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ապահովագրության պայմանագրի կնքման կարգն ու պայմանները, ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման և լուծման դեպքերն ու պայմանները նկարագրված են «ՀԱԱԳ» ԱՓԲԸ-ի պաշտոնական վեբ կայքում՝ www.eia.am:

«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ն վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

ՀՀ ԿԲ լիցենզիա՝ ԱՊՈ 0011

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով

+374 10 58 29 29

eia.am

info@eia.am

ՀՀ, ք. Երևան, 0010, Միեր Մկրտչյան 5,
Բ մասնաշենք, 9-րդ հարկ